ՔԴՊ-ի ԱՎԱՐՏԱԿԱՆ ՎԿԱՅԱԳՐԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆԸ

«ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՕՐ»

Հունիսի 28-ին Արարատյան Հայրապետական Թեմի Առաջնորդական Փոխանորդ Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Ներսիսյանի հայրական օրհնությամբ Առաջնորդարանի դահլիճում ընդհանրական Տերունական աղոթքից հետո, տեղի ունեցավ, արդեն ավանդական դարձած, Թեմի Քրիստոնեական Դաստիարակության Դպրոցների 58 շրջանավարտներին ավարտական վկայականների հանձնման հանդիսավոր արարողությունը: ՔԴԿ-ի տնօրեն Ա. Գաբուճյանը, որն էլ սաներին հանձնեց վկայականները, օրն այս բնորոշեց իբրև «ժառանգություն փոխանցելու օր»:

Արդեն վեցերորդ տարին Արարատյան Հայրապետական Թեմի կիրակնօրյաներում, ինչպես նաև հանրակրթական մի շարք դպրոցներում գործող քրիստոնեական լրիվ դասընթացների մասնակիցներին շնորհվեց վկայագիր՝ Գարեգին Արքազանի մակագրությամբ, որով փաստվում է ուսանողների կրոնական գիտելիքներն ու նվիրվածությունը Հայ Առաքելական Եկեղեցուն:

Իր ելույթում Ա. Գաբուճյանը, շնորհակալանքի ջերմ խոսքեր ուղղելով առաջին հերթին Առաջնորդական Փոխանորդին, այնուհետև ուսուցչական կազմին և վերջում նաև աշակերտությանը, ի մասնավորի ասաց.

- Մեր Հանրապետության դառն ու դաժան, տագնապալի ու տառապանքի իրականության, բայց և այնպես նվիրական լույսի, հույսի սրբավայր-օրրանի գործի և առաքելության ժառանգորդները դառնալու հպարտությունը մեզ անսահմանորեն ուրախացնում է այսօր, տեսնելով ձեր պատկերների մեջ ոսկիացած արտեր, որոնց հասկերը վաղը մեր ժողովրդի օջախներում և սեղանների վրա անպակաս հաց պիտի լինի:

Այնուհետև իր խոսքի մնացյալ մասը Մարկոսի Ավետարանի «Այրի կնոջ» առակի թեմաներով շարադրելով, Ա. Գաբուճյանն ավելացրեց.

- Ուսանողը նման է գանձանակի և ուսուցիչներիս ուսերին է մեր ունեցածը ամբողջությամբ նրա մեջ նետելը, որ չկորչի, չանշքանա, չծածկվի, այլ, երբ լցվի ու բացվի, նրա մեջ միայն ու միայն հարստություն լինի: Ինչ որ նետես, այն կմնա՝ հարստությունը: Գանձանակը, եթե գանձ չպարունակի, սովորական, անիմաստ տուփի կվերածվի՝ արձագանքն իր մեջ պահող արկղի: Այրի կնոջ գիտակցությունը թող կեցվածք դառնա մեր բոլորին՝ այս մարդ-գանձանակները միայն ու միայն գանձերով հարստացնելու և մշտապես լեցուն պահելու:

Ձեր ձեռքերով, ձեր սրտերով և ձեր գիտակցությամբ հարստացրեք այս գանձը, որովհետև մեր Եկեղեցին ու ժողովուրդը աշխատող, ազնիվ ձեռքերի, սիրող սրտերի և ստեղծագործ ու պատասխանատու, գիտակից մտքերի կարոտն ու կարիքն ունեն:

Վերջում, խոսքը դպրոցների տնօրեններին ուղղելով, Ա. Գաբուճյանն ավելացրեց.

- Իմ շնորհակալության խոսքը մեր գործին ու առաքելության նպաստող բոլոր տնօրեններին, որոնց աջակցությունը անուրանալի է և իր վճռորոշ դերն ունի մեր գործի հաջողության մեջ: Շնորհավորում եմ Ձեզ, մանավանդ Ձեր քաջության համար, որ հավատացիք այս գործին և վստահեցիք մեզ և, իբրև հավատարիմ գործակիցներ, միասնաբար լծվեցիք աստվածահաճո այս գործին: Գնահատեցիք մեզ, շնորհավորեցիք և շնորհակալություն հայտնեցիք մեզ, որը և Ձեր հավատքի արտահայտությունն էր: Շարունակեցեք այդպես մնալ: Գործակցե՛նք, պայքարե՛նք մեր սերունդների առողջ դաստիարակության համար, մեր եկեղեցու, մեր ժողովրդի և մեր հայրենիքի բարի ու հաղթական օրերի համար:

Աշակերտների ուժերով տեղի ունեցավ հանդես, որը ոգևորության և հուզմունքի ջերմ ալիքներ առաջացրեց ներկաների հոգիներում: Հանդեսի ավարտին Գարեգին Սրբազանի օրհնության խոսքը ներկաներին հաղորդեց Տ. Համազասպ քահանա Բաբուճյանը և հայցեց ամենակարող Աստծո բարեհաճությունը ՔԴ դպրոցների բոլոր նմանատիպ ձեռնարկումների համար:

Հոգեցունց այս արարողությունը, որը կայացավ հոգևոր հայրերի, ուսուցիչների և ծնողների ներկայությամբ, ավարտվեց «Պահպանիչ»-ով և Տերունական աղոթքի երգեցողությամբ:

ՍՆԱՀԻՏ ՍԵՂՐԱԿՅԱՆ
Արարատյան Հայրապետական Թեմ